

Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի

տնօրեն՝ Տ. Ավետիսյան

28.06.2021թ

ԿԱՐԾԻՔ

Արման Գևորգի Անդրիկյանի

«Հայ առաքելական եկեղեցու Իրանի թեմերը

(Պատմություն և արդիականություն)»

վերնագրով թեկնածուական ատենախոսության մասին

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սփյուռքի հետազոտությունների բաժնի 2021 թ. հունիսի 28-ի նիստում քննարկվեց ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի ասպիրանտ Արման Գևորգի Անդրիկյանի «Հայ առաքելական եկեղեցու Իրանի թեմերը (Պատմություն և արդիականություն) վերնագրով ատենախոսական աշխատանքը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմամբ»:

Նիստին մասնակցում էին՝ սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի վարիչ պ.գ.դ. Ռ. Կարապետյանը, բաժնի գիտաշխատողներ՝ պ.գ.թ. Ս. Բարսեղյանը, պ.գ.թ. Ս. Ներսիսյանը, պ.գ.թ. Լ. Տանաօջյանը, պ.գ.թ. Ն. Խաչատրյանը, Կ. Նալբանդյանը և Ս. Մարկոսյանը:

Ելույթ ունեցան՝ պ.գ.դ. Ռ. Կարապետյանը, պ.գ.թ. Լ. Տանաօջյանը, պ.գ.թ. Ս. Ներսիսյանը, պ.գ.թ. Ն. Խաչատրյանը և պ.գ.թ. Ս. Բարսեղյանը: Նիստի մասնակիցներն արձանագրում են հետևյալը.

Ատենախոսությունը նվիրված է Հայ Առաքելական Եկեղեցու Իրանի թեմերի պատմությանը և արդի վիճակին: Աշխատանքը իրականացվել է Հայ Առաքելական Եկեղեցու Ատրպատականի և Սպահանի (Նոր Ջուղայի) թեմերի վերաբերյալ երկու տասնյակից ավելի ծավալուն աղբյուրագիտական նյութերի վերլուծության հիման վրա: Դրանք ընդունում են հայ պատմիչների աշխատություններ, հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Կաթողիկասական Դիվանի փաստաթղթեր,

ուղեգրություններ, վարքագրական գրականություն, որոնք հեղինակի կողմից մանրամասն ուսումնասիրվել և համակողմանի քննվել են:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, համապատասխանաբար հինգ, յոթ և չորս ենթալուի պարունակող երեք զլուխներից և եզրակացություններից, սկզբնաղբյուրների և գրականության ցանկերից:

Իրանահայ գաղթօջախի դերը անզնահատելի է հայ ժողովրդի գոյատևման, էթնիկ նկարագրի վերարտադրման և զարգացման, նրա տարբեր հատվածների համախմբման և ազգային ինքնության պահպանման գործում: Այս գործնթացներում մեծ դեր ունի Ատրպատականի և Նոր Ջուղայի հայ առաքելական եկեղեցու թեմերի հոգևոր գործունեությունը, որի պատմական փորձի քննարկումը և ուսումնասիրումը կարևոր է ինչպես տեսական, այնպես ել գործնական առումներով: Նշվածի համատեքստում ներկայացված աշխատությունը ողջունելի է:

Ներածության մեջ ատենախոսը հիմնավորում է թեմայի արդիականությունը, ձևակերպում է աշխատանքի նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ներկայացնում հետազոտման մեթոդաբանությունը, աղբյուրների և գրականության համառոտ ակնարկը:

Ատենախոսության առաջին զլուխը նվիրված է Հայ Առաքելական Եկեղեցու թեմերի գործունեության պատմությանը, որն ընդգրկում է V-XVIII դարերը: Տվյալ հատվածում հեղինակը առանձնացնում է Իրանի տարածքում հայկական գաղթօջախների ձևավորման պատմության կարևոր փուլերը: Նա դիտարկում է հայության զանզվածային բռնազարդերի գործընթացները, սկսած Սասանյան Արտաշիր (228թ.) և Շապուհ Բ Երկարակյաց (369 թ.) թագավորների ժամանակահատվածից և Հայաստանի առաջին բաժանման (387 թ.) շրջանից, շարունակում է արաբական, սելջուկյան և մոնղոլական արշավանքների, թուրք-պարսկական պատերազմների հետևանքով հայերի բռնազարդով պայմանավորված Ատրպատականի, Նոր Ջուղայի, Թավրիզի, Սուլթանեյի, Սալմաստի հայ գաղթօջախների առաջացման, ամրապնդման պատմությամբ: Այս համատեքստում նկարագրվում է Հայ Առաքելական եկեղեցու Իրանի թեմերի ձևավորումը և գործունեության ծավալումը: Առանձնակի ուշադրության է արժանանում հայկական քրիստոնեական վանքերի և եկեղեցիների կառուցման պատմությունը: Դրա հետ մեկտեղ, ատենախոսը ցույց է տալիս եկեղեցական դասի

ակնառու ներկայացուցիչների գործունեությունը, քննարկում է նրանց դերը Իրանում Հայ Առաքելական եկեղեցու թեմերի ձևավորման, ամրապնդման և զարգացման գործում: Ատենախոսության մեջ հատուկ անդրադարձ է կատարվում XIV-XVII դդ. Հայոց նոր վկաների կամ իրանահայ հոգևոր թեմերի «մոռացված սրբերի» Ավագ Սալմաստեցու, Խահակ Թավրիզեցու, Միրաք Թավրիզեցու, Գրգոր Արփայեցու կենսագործունեությանը, ցույց տալով նրանց դերակատարումը հայ քրիստոնեական ինքնության պահպանման գործում ազգի համար այդ արգասարեր դարաշրջանում: Այստեղ առանձնակի ուշադրության է արժանանում մեր կարծիքով շատ կարևոր հարց՝ Նոր Զուղայի և Ատրպատականի հոգևոր թեմերի փոխհարաբերությունները Սր. Էջմիածնի հետ XVIII դարում: Հեղինակը խորությամբ ներկայացնում է Հայոց հայրապետների շանքերը պարսկահայության կրոնաիրավական դրության բարելավման գործում՝ առանձնացնելով կաթողիկոսներ Սիմեոն Երևանցու, Ղուկաս Կարնեցու գործունեությունը: Միաժամանակ ատենախոսության մեջ ներկայացված է XVII-XVIII դդ. իրանահայ թեմերի առաջնորդների կենսագործունեության համառոտ բնութագիրը:

Երկրորդ՝ ամենաընդարձակ զյուում ներկայացված է իրանահայ հոգևոր թեմերի գործունեությունը XIX-XX դարերում, որտեղ քննության են առնվում մի շարք կարևոր հարցեր՝ կապված այդ գործունեության բնութագրման հետ: Այսպես օրինակ, մանրամասն նկարագրվում է պարսկահայության և ուսումնասիրվող հոգևոր թեմերի վիճակը XIXդ. Նասրեդդին և Սոզաֆֆարեդդին շահերի կառավարման ժամանակահատվածում, որը հեղինակը որակում է որպես իրանահայերի և նրանց հոգևոր թեմերի զարգացման համար բարենպաստ: Հեղինակի կողմից այն հաստատվում է Նոր Զուղայի և Ատրպատականի թեմակալ առաջնորդների հաջող պայքարով՝ իրենց հոգևոր իշխանության տակ գտնվող հայության իրավաքաղաքական և կրոնական ազատությունների համար (Թաղեռս եպիսկոպոս Բեկնազարյան, Գեորգ եպիսկոպոս Վեհապետյան և այլք): Հայ եկեղեցու այս առաջնորդների գործունեությունը տրվում է XIX-XX դդ. իրանահայ թեմերի հոգևոր հայրերի կենսագրական համառոտ բնութագրերի խորապես: Նշվածի համատեքստում հատուկ նշանակություն է տրվում Ատրպատականի թեմակալ առաջնորդ Ներսես արք. Մելիք Թանգյանի հայրենանվեր գործունեությանը Մեծ եղեռնից փրկված հայ գաղթականության

ինդիրների լուծման և հաղթահարման գործում: Անդրադառնալով ՀՀ դարի իրադարձություններին ատենախոսը հատուկ ուշադրություն է դարձնում իրանահայ հոգևոր թեմերի ներկայիս կառավարման կանոնադրական համակարգի վրա և փորձում է պարզաբանել թեմերի փոխհարաբերությունները իրանական պետության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջև:

Երրորդ գլխում վերլուծվում է իրանահայ հոգևոր թեմերի գիտակրթական և մշակութային գործունեությունը: Հեղինակը առաջին հերթին առանձնացնում է իրանահայ հոգևոր թեմերի՝ որպես հայ գրչության կենտրոնների (Աբ. Թաղեռսի վանք, Խոյ, Մակու, Թավրիզ, Սուլթանիկ, Նոր Ջուղա և այլք) գործունեությունը: Դրանց շարքում ցույց է տրվում իրանահայ հոգևոր թեմերին պատկանող նշանավոր վանքերի, վանական համալիրների, եկեղեցիների, առաջնորդանիստ կառույցների կառուցման համառոտ ակնարկ հնագույն ժամանակներից մինչև ՀՀդ. Վերջ: Ներկայացվում է իրանահայ հոգևոր և մշակութային ականավոր գործիչների վերաբերյալ նյութեր: Այս գլխի վերջում տրվում է Իրանի հայ կաթողիկե և ավետարանական համայնքների գործունեության նկարագիրը: Ատենախոսությունը ավարտվում է ամփոփիչ եզրակացությամբ, որում մասնավորապես նշվում է, որ իրանահայ գալութօջախների առաջացման (պայմանավորված հայ ժողովորդի պատմության ընթացքում իրար հաջորդող էքսպանսիաներով և պատերազմներով), պահպանման և հետազա զարգացման գործում հիմնական դերը պատկանում էր Հայ Առաքելական եկեղեցուն և նրա ակնառու հոգևոր հայրերի եռանդուն գործունեությանը: Եկեղեցին կատարեց ոչ միայն հոգևոր քրիստոնեական կենտրոնի դեր, այլ նաև դարձավ շարժիչ ուժ հայերի ինքնակազմակերպման, սոցիալական և մշակութային դիմագծի պահպանման և որ ամենակարևորն է, զարգացման համար:

Արման Անդրիկյանի ատենախոսությունը իր կուր կառուցվածքով, հարուստ բովանդակությամբ, աղբյուրների բազմազանությամբ և բովանդակյին հազեցվածությամբ, գրագետ շարադրանքով հասուն գիտական աշխատություն է: Մինչ այժմ բավականին շատ ուսումնասիրված իրանահայ գալութօջախի պատմությունը ներկայացված ատենախոսության մեջ ստացավ նոր բովանդակություն, որը պայմանավորված է առաջին անգամ հայ գալութօջախի դիտարկման նոր տեսանկյունով, հրապարակում եղած նյութի նկատմամբ

Նորագույն մեթոդաբանության մոտեցմամբ, համակարգված գիտելիքի կառուցման և կարևոր դիտարկումների, վերլուծության և եզրահանգումների ձգրտությամբ և օբյեկտիվությամբ:

Ըստ արժանվույն գնահատելով ատենախոսի ծավալուն և արդյունավետ աշխատանքը կցանկանայինք նրա ուշադրությունը հրավիրել որոշ թերացումների վրա.

1. Ատենախոսության կառուցվածքը որոշակի տրամաբանական թերություններ ունի. դա նկատելի է ենթագույնների դասավորվածության մեջ: Որպես օրինակ՝ երկրորդ և այլ զլուխներում տրվում է առանձին հոգևորականի գործունեության նկարագրությունը, ապա մյուս ենթագլխում հեղինակը նորից անդրադառնում է այդ դասի մյուս ներկայացուցիչների կենսագրությանը: Այն դեպքում, եթե կարելի էր մեկ ենթագլխի մեջ տալ ատենախոսության մեջ նշված իրանահայ հոգևոր դասի բոլոր ներկայացուցիչների գործունեության նկարագիրը և միայն դրա խորապատկերին ներկայացվեր ակնառու հոգևոր հայրերի հայրենանվեր աշխատանքը:

2. Աշխատանքը կշահեր եթե նյութի համակարգման և վերլուծության մեջ տրվեր տրամաբանական կապ: Շարադրանքում անրաժեշտ է երևոյթները դասակարգել՝ ըստ քննվող թեմայի: Այսպես օրինակ, լավ կլիներ յուրաքանչյուր պատմական իրավիճակի (լինի դա մոնղոլական արշավանքներ, կամ թուրք-պարսկական պատերազմներ) համատեքստում տալ եկեղեցու հայրերի վարած քաղաքանության վերլուծությունը, որը կարելի էր կատարել նրանց կենսագրության նկարագրությունների հիման վրա: Այստեղ հավանաբար անհրաժեշտ կլիներ կենտրոնանալ առանձնացված գործի մոտեցումների բովանդակությանը ոչ միայն նկարագրական, այլ նաև քննադատական մոտեցումներով:

3. Ըստ մեզ, աշխատանքում նկարագրական և վերլուծական մասերը բավականին անհամաշափ են. առաջինը գերակշռում է: Ահրաժեշտություն չկար տեքստը ծանրաբեռնել նկարագրական մանրամասներով, ցանկալի կլիներ այն հարստացնել հեղինակի կողմից տրվող գնահատողական վերլուծություններով և մոտեցման սկզբունքների պարզաբանմամբ:

4. Կցանկանայինք, որ հեղինակը աշխատանքը հրատարակելիս օգտվեր նորագույն սոցիոլոգիական նյութերից, որոնք առկա են իրանահայերի շրջանում մեր բաժնի

աշխատակիցների կողմից կատարած հետազոտությունների հիման վրա հրատարակություններում:

Նշված թերությունները ամենաին չեն նսեմացնում ատենախսություն գիտական արժեքը:

Ատենախոսության սեղմագիրն արտահայտում է աշխատանքի հիմնական բովանդակությունը, որում տեղ զտած դրույթներն ու թեզերը հրատարակվել են վեց աշխատություններում:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սփյուռքի հետազոտությունների բաժինը գտնում է, որ Արման Գևորգի Անդրիկյանի «Հայացքելական եկեղեցու Իրանի թեմերը (Պատմություն և արդիականություն)» վերնագրով ատենախոսական աշխատանքը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին: Այս աշխատությունը ցանկալի է տեսնել հրատարակված:

## Ավյուտքի հետազոտությունների

Fwđūh

Վարհե

Ը. Ա. Կարապետյան

Ռ. Ս. Կարապետյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության

## Ինստիտուտի փոխտնօրեն

Ա. Ա. Բոբոխյան

28.06.2021 p

